Social Security

# Լրացուցիչ Ապահովության Եկամուտը

www.socialsecurity.gov

# Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

## Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

## Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

## Բովանդակություն

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը . . . . . 4

Ինչ է SSI-ը . . . . . 4

SSI ստանալու կանոնները . . . . . 5

Ինչպես դիմել SSI-ի համար . . . . . 8

Դուք կարող եք հնարավորություն ունենալ ստանալու այլ օգնություն . . . . . 10

Օգնություն Medicare-ի համար վճարման գործում . . . . . 11

Դուք կարող եք հնարավորություն ունենալ Սոցիալական ապահովություն ստանալու համար . . . . . 12

## Լրացուցիչ Ապահովության Եկամուտը

Սույն գրքույկում բացատրվում է, թե ինչ է Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI), ով կարող է ստանալ այն եւ ինչպես դիմել: Այն տալիս է հիմնական տեղեկատվությունը եւ նախատեսված չէ բոլոր հարցերին պատասխանելու համար: Լրացուցիչ տեղեկատվության համար դուք պետք է խոսեք Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

SSI-ի ծրագրով կատարվում են վճարումներ ցածր եկամուտ ունեցող մարդկանց, որոնք 65 տարեկան կամ ավելի մեծ են, կույր են կամ ունեն հաշմանդամություն:

SSI-ի ծրագիրը կառավարվում է Սոցիալական ապահովության վարչության կողմից: Չնայած որ ծրագիրը կառավարվում է Սոցիալական ապահովության կողմից, SSI-ը չի վճարվում Սոցիալական ապահովության հարկերի հաշվին: SSI-ը վճարվում է ԱՄՆ գանձապետարանի ընդհանուր միջոցների հաշվին, այլ ոչ՝ Սոցիալական ապահովության հավատարմագրային ֆոնդերի հաշվին:

## Ինչ է SSI-ը

SSI կատարում է ամսական վճարումներ այն մարդկանց, որոնք ունեն ցածր եկամուտ եւ սակավ միջոցներ եւ.

- 65 տարեկան կամ ավելի մեծ են.
- Կույր են կամ
- Հաշմանդամ են:

Եթե դուք ստանում եք նաեւ Լրացուցիչ սոցիալական եկամուտ (SSI), ապա դիմեք մեզ *What You Need To Know When You Get Supplemental Security Income* (*Դուք ինչ պետք է իմանաք, եթե դուք ստանում եք Լրացուցիչ Սոցիալական Եկամուտ*, Հրապարակում թիվ 05-11011, մատչելի է միայն անգլերեն) հրապարակումը ստանալու համար:

Հաշմանդամ կամ կույր մարդիկ նույնպես կարող են ստանալ SSI: Հավելյալ տեղեկության համար պահանջեք *Նպաստներ հաշմանդամություններով երեխաների համար* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10026-AM):

SSI-ի բազային գումարը նույնն է ամբողջ երկրում: Այնուամենայնիվ, շատ նահանգներ բազային նպաստին ավելացնում են փողեր: Դուք կարող եք զանգահարել մեզ եւ տեղեկանալ ձեր նահանգում գործող գումարների մասին:

## Ձեր եկամուտը եւ միջոցները

Ձեր SSI ստանալու հանգ ամանքը կախված է ձեր եկամուտից եւ միջոցներից (ձեր սեփականությունը հանդիսացող իրերից): Եկամուտ Եկամուտը դա այն փողերն են, որը դուք ստանում եք, ինչպես օրինակ աշխատավարձը, Սոցիալական ապահովության նպաստները եւ կենսաթոշակները: Եկամուտը ներ է առնում այնպիսի բաներ, ինչպիսիք են սնունդն ու կացարանը: Եկամուտի այն գ ումարը, որը դուք կարող եք ստանալ ամեն ամիս եւ դեռեւս ստանալ SSI, մասամբ կախված է նրանից, թե որտեղ եք դուք ապրում: Դուք կարող եք զանգ ահարել մեզ եւ տեղեկանալ ձեր նահանգ ում գ ործող եկամուտի սահմանների մասին:

SSI-ի պահանջներին ձեր համապատասխանության մասին որոշում կայացնելիս Սոցիալական ապահովությունը հաշվի չի առնում ձեր ամբողջ եկամուտը: Օրինակ, մենք հաշվի չենք առնում.

- Ձեր կողմից ստացվող եկամուտի մեծամասնության ամսական առաջին 20 դոլարը.
- Աշխատանքից վաստակած ամսական առաջին 65 դոլարը եւ 65 դոլարից վեր գ ումարի կեսը.
- Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի (SNAP) նպաստները, որ նախկինում կոչվում էին պարենային կտրոններ,
- Կացարանը, որը դուք ստանում եք շահույթ չհետապնդող մասնավոր կազմակերպություններից, ինչպես նաեւ
- Տան էներգ ետիկայի հետ կապված օգ նության մեծամասնությունը:

Եթե դուք ամուսնացած եք, ապա SSI-ի պահանջներին ձեր համապատասխանությունը որոշելիս, մենք նաեւ ներառում ենք ձեր կնոջ (ամուսնու) եկամուտը եւ միջոցները: Եթե դուք 18 տարեկանից երիտասարդ եք, ապա մենք ներառում ենք ձեր ծնողների եկամուտի եւ միջոցների մի մասը:

Իսկ եթե դուք հովանավորված ոչ քաղաքացի եք, ապա մենք կարող ենք ներառել ձեր հովանավորի եկամուտը եւ միջոցները: Եթե դուք ուսանող եք, ապա ձեր կողմից ստավցող աշխատավարձը եւ կրթաթոշակը **կարող են հաշվի չառնվել**:

Եթե դուք հաշմանդամ եք, բայց աշխատում եք, ապա Սոցիալական ապահովությունը **հաշվի չի առնում** աշխատավարձերը, որոնց օգ նությամբ դուք վճարում եք այն

իրերի եւ ծառայությունների համար, որոնք ձեզ օգնում են աշխատել: Օրինակ, եթե դուք ունեք հաշմանդամային սայլակի կարիք, ապա SSI-ի պահանջներին համապատասխանության որոշումը կայացնելիս, մենք հաշվի չենք առնելու այն աշխատավարձը, որի օգնությամբ դուք վճարում եք հաշմանդամային սայլակի համար:

Դրանից բացի, Սոցիալական ապահովությունը **հաշվի չի առնում** այն աշխատավարձը, որը կույրի կողմից օգտագործվում է աշխատանքի հետ կապված ծախսերի համար: Օրինակ, եթե կույրը իր աշխատարձի հաշվին վճարում է աշխատանքի գնալու եւ աշխատանքից վերադառնալու հետ կապված ծախսերը, ապա տեղափոխման ծախսերը վճարելու համար օգտագործվող աշխատավարձը որպես եկամուտ հաշվի չի առնվում:

Եթե դուք հաշմանդամ կամ կույր եք, ապա ձեր կողմից ուսման կամ աշխատելու հետ կապված իրեր գնելու նպատակակով օգտագործվող (խնայվող) եկամուտը, **կարող է հաշվի չառնվել**:

## Միջոցներ (ձեր սեփականությունը հանդիսացող իրեր)

Միջոցները, որոնք մենք հաշվի ենք առնում SSI-ի պահանջներին ձեր համապատասխանությունը որոշելիս, ներառում են անշարժ գույքը, բանկային հաշիվները, կանխիկ դրամը, բաժնետոմսերը եւ բոնդերը:

Դուք կարող եք հնարավորություն ունենալ SSI ստանալու համար, եթե ձեր միջոցների արժեքը չի գերազանցում 2.000 դոլարը: Զույգը կարող է հնարավորություն ունենալ SSI ստանալու համար, եթե նրանք ունեն միջոցներ, որոնց արժեքը չի գերազանցում 3.000 դոլարը: Եթե ձեզ պատկանում է գույք, որը դուք փորձում եք վաճառել, ապա կարող եք ունենալ SSI ստանալու հնարավորություն այն վաճառելու ընթացքում:

Սոցիալական ապահովությունը հաշվի չի առնում այն ամենը, ինչ հանդիսանում է ձեր սեփականությունը՝ SSI-ի պահանջներին համապատասխանելու տեսակետից ձեր միջոցների մեծությունը որոշելիս: Օրինակ, մենք հաշվի չենք առնում.

- Տունը, որտեղ դուք ապրում եք եւ այն հողը, որի վրա այն գտնվում է.
- Կյանքի ապահովագրության ապահովագրերը 1.500 դոլար անվանական արժեքով.
- Ձեր ավտոմեքենան (սովորաբար).

- Ձեր եւ ձեր ընտանիքի անմիջական անդամների թաղման տեղերը, ինչպես նաեւ
- Մինչեւ 1.500 դոլարը որպես թաղման հոգ եպահուստ ձեզ եւ մինչեւ 1.500 դոլարը որպես թաղման հագ եպահուստ ձեր կնոջ (ամուսնու) համար:

## Այն կանոնները, որոնց դուք պետք է բավարարեք

SSI ստանալու համար դուք պետք է ապրեք ԱՄՆ-ում կամ Հյուսիսային Մարիանայի կղզիներում եւ լինեք ԱՄՆ քաղաքացի կամ հպատակ: Որոշ դեպքերում, ոչ քաղաքացի բնակիչները կարող են համապատասխանել SSI-ի պահանջներին: *Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրե՛ք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Օտար Քաղաքացիների Համար* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-11051-AM):

Եթե դուք բավարարում եք Սոցիալական ապահովության կամ այլ նպաստների պահանջներին, ապա դուք պետք է դիմեք նրանց համար: Դուք կարող եք ստանալ եւ՛ SSI եւ՛ այլ նպաստներ՝ եթե դուք բավարում եք երկուսի պահանջներին:

Եթե դուք ապրում եք որոշ կարգ ի հաստատություններում, ապա դուք կարող եք ստանալ SSI: Եթե դուք ապրում եք քաղաքային կամ օկրուգ ային հանգ ստյան տանը, կես ճանապարհին գ տնվող հյուրանոցում կամ հասարակական այլ հաստատությունում, ապա դուք, որպես կանոն, չեք կարող ստանալ SSI: Սակայն գ ոյություն ունեն որոշակի բացառություններ:

Եթե դուք ապրում եք պետության կողմից շահագ ործվող համայնքային տանը, որտեղ ապրում են ոչ ավել քան 16 հոգ ի, ապա դուք կարող եք ստանալ SSI:

Եթե դուք ապրում եք պետական հաստատությունում, որպեսզի հաճախեք կրթական կամ աշխատանքային հաստատված ուսուցում, ապա դուք կարող եք ստանալ SSI:

Եթե դուք ապրում եք անտունների ժամանակավոր ապաստարանում, ապա դուք կարող եք ստանալ SSI:

Եթե դուք ապրում եք պետական կամ մասնավոր հաստատությանը եւ «Medicaid»-ը վճարում է ձեր խնամքի հետ կապված ծախսերի կեսից ավելին, ապա դուք կարող եք ստանալ SSI-ի փոքր նպաստ:

## Ինչպես դիմել SSI-ի համար

SSI-ի համար դիմելիս, դուք կարող եք ձեր դիմում-հայտարարագրի մեծ մասը լրացնել այցելելով մեր վեբ կայքը՝ ***www.socialsecurity.gov*** հասցեում: Դուք նաեւ կարող եք զանգահարել մեր **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով եւ խնդրել Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ հանդիպման նշանակում:

Մինչեւ 18 տարեկան կույր կամ հաշմանդամ երեխաների համար, որպես կանոն, կարող են դիմել իրենց ծնողները կամ խնամողները: Որոշ դեպքերում, երեխաների համար կարող են դիմել այլ երրորդ կողմերը:

Դիմելիս, դուք պետք է ձեզ հետ բերեք որոշ առարկաներ: Նույնիսկ եթե դուք չունենք ստորեւ նշված առարկաներից մի մասը՝ ամեն դեպքում դիմեք: Սոցիալական ապահովության աշխատողները կարող են օգնել ձեզ պահանջվողը ստանալու հարցում: Խնդրվում է բերել.

- Ձեր Սոցիալական ապահովության քարտը կամ ձեր Սոցիալական ապահովության հաշվառումը.
- Ձեր ծննդյան վկայականը կամ ձեր տարիքի այլ ապացույց.
- Տեղեկատվություն ձեր ապրած տան մասին, ինչպես օրինակ ձեր հիփոտեկը կամ ձեր վարձակալության պայմանագիրը եւ վարձատուի անունը, ազգանունը.
- Վճարացուցակների ստացականները, բանկային գրքույկները, ապահովագրական ապահովագրերը, թաղման հոգեպահուստի գրանցումները եւ այլ տեղեկատվություն կապված ձեր եկամուտի եւ ձեր սեփականությունը հանդիսացող իրերի հետ.
- Ձեր կողմից այցելած բժիշկների անունները, ազգանունները, հիվանդանոցների եւ կլինիկաների անվանումները հասցեները եւ հեռախոսահամարները՝ եթե դուք դիմում եք SSI-ի համար ձեր կույր կամ հաշմանդամ լինելու պատճառով.
- ԱՄՆ քաղաքացիության կամ այս ծրագրին մասնակցելու համար իրավասու ոչ-քաղաքացու կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և
- Ձեր չեկի գրքույկը կամ այլ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս բանկում կամ վարկային միությունում ունեցած խնայողական կամ վարկային հաշվի համարը:

Եթե Ձեր SSI-ը հաստատվել է, Դուք պետք է էլեկտրոնային եղանակով ստանաք Ձեր վճարումները: Վճարումները կարող են կատարվել ուղղակի փոխանցման, Direct Express® քարտային ծրագրի կամ էլեկտրոնային փոխանցումների հաշվի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ***www.GoDirect.org***.

## Ծանուցում կույրերի եւ հաշմանդամների համար

Եթե դուք աշխատում եք, ապա գոյություն ունեն ձեզ օգնելու հատուկ կանոններ: Աշխատելու ընթացքում դուք կարող եք շարունակել SSI-ի վճարումներ ստանալը: Ըստ ձեր վաստակած գումարի աճի ձեր SSI-ի վճարումները կարող են կրճատվել կամ դադարեցվել, բայց դուք կարող եք հնարավորություն ունենալ պահպանելու ձեր Medicaid-ի ծածկույթը:

Դուք նաեւ կարող եք հնարավորություն ունենալ որոշակի փող ետ գցել աշխատելու կամ սովորելու նպատակով: Այդ դեպքում ետ գցած փողը չի կրճատելու ձեր SSI-ի գումարը:

Կույրերը կամ հաշմանդամները, որոնք դիմում են SSI-ի համար, կարող են ստանալ իրենց աշխատանքին նպաստող անվճար ծառայություններ: Այդ ծառայությունները կարող են ներառել խորհրդատվությունը, աշխատանքային ուսուցումը եւ աշխատանք գտնելու գործում օգնությունը:

Հավելյալ տեղեկության համար պահանջեք *Հաշմանդամության ընթացքում աշխատելը՝ ինչպես մենք կարող ենք օգնել Հունվար* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10095-AM):

## Բողոքարկելու իրավունքը

Եթե համաձայն չեք Ձեր հայտի վերաբերյալ կայացված որոշմանը, ապա կարող եք բողոքարկել այն: *Your Right To Question A Decision Made On Your Supplemental Security Income (SSI) Claim* («Լրացուցիչ ապահովության եկամուտի (SSI) վերաբերյալ կայացված որոշումը բողոքարկելու Ձեր իրավունքը», Publication No. 05-11008, միայն անգլերեն) հրապարակման մեջ նկարագրված է, թե ինչ քայլեր կարող եք ձեռնարկել:

Կարող եք ինքներդ բողոքարկել SSI-ի վերաբերյալ կայացված որոշումը՝ Սոցիալական ապահովության վարչությունից ստացված անվճար օգնությամբ: Ձեր շահերը կարող է ներկայացնել նաև Ձեր ընտրած որևէ անձ: Գործում են որոշակի կանոններ այն բանի վերաբերյալ, թե ով կարող է Ձեզ ներկայացնել և ինչպիսի գործողություններ կարող է կատարել

ներկայացուցիչը: Մենք կաշխատենք Ձեր ներկայացուցչի հետ այնպես, ինչպես կաշխատեինք Ձեզ հետ: Հարցրեք մեզ, եթե ուզում եք իմանալ, թե ինչպես նշանակել որևէ մեկին՝ Ձեր անունից ներկայանալու համար: Ներկայացվելու մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել նաև «*Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը*» (Publication No. 05-10075-AM) հրապարակման մեջ կամ մեր կայքում՝ ***www.socialsecurity.gov/representation***:

## Դուք կարող եք հնարավորություն ունենալ ստանալու այլ օգնություն

Եթե Դուք SSI եք ստանում, ապա կարող եք նաև հնարավորություն ունենալ՝ Ձեր նահանգից կամ շրջանից օգնություն ստանալու: Օրինակ՝ կարող եք հնարավորություն ունենալ ստանալու Medicaid, սնունդ կամ սոցիալական այլ ապահովություն: Զանգահարեք Ձեր սոցիալական ապահովության տեղական բաժին կամ հասարակական բարեկեցության գրասենյակ՝ Ձեր համայնքում տրամադրվող ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար:

## Լրացուցիչ սննդի աջակցության ծրագիր (պարենային կտրոններ)

Եթե Դուք SSI եք ստանում, կարող եք հնարավորություն ունենալ՝ նախկինում որպես պարենային կտրոններ հայտնի Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրից (SNAP) օգնություն ստանալու: Եթե Ձեր ընտանիքի բոլոր անդամներն են դիմում SSI-ի կամ արդեն ստանում այն, ապա Դուք կարող եք դիմել SNAP-ի՝ Սոցիալական ապահովության գրասենյակում:

Եթե Ձեր տան ոչ բոլոր անդամներն են դիմում կամ ստանում SSI, այցելեք ***www.fns.usda.gov/snap***՝ իմանալու, թե ինչպես դիմել: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Nutrition Assistance Programs* («*Սննդի աջակցության ծրագրեր*», Publication No. 05-10100, միայն անգլերեն) հրապարակումը:

## Medicaid

SSI ստանալիս, դուք կարող եք ստանալ Medicaid, որը ձեզ օգնում է վճարելու բժշկի հետ կապված եւ հիվանդանոցային ծախսերը: Սոցիալական ապահովության կամ բժշկական օգնության ձեր տեղական գ րասենյակները կարող են ձեզ տեղեկատվություն տալ Medicaid-ի մասին:

# Օգ նություն Medicare-ի համար վճարման գ ործում




Եթե դուք ստանում եք Medicare եւ ունեք փոքր եկամուտ եւ սակավ միջոցներ, ապա ձեր նահանգ ը կարող է վճարել ձեզ Medicare-ի ձեր ապահովագ րավճարները, իսկ որոշ դեպքերում՝ Medicare-ի այլ ծախսերը, ինչպիսիք են չապահովագ րված նվազագ ույները եւ համաապահովագ ությունը: Պահանջներին ձեր համապատասխանության հարցը կարող է որոշել միայն ձեր նահանգ ը: Համապատասխանատվություն հարցը պարզելու համար զանգ ահարե՝ք սոցիալական ծառայության ձեր նահանգ ային կամ տեղական գ րասենյակին կամ Medicaid-ի գ ործակալությանը: Դուք կարող եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այդ ծրագ երի մասին Medicare եւ Medicaid ծառայություններից (Centers for Medicare & Medicaid Services, CMS), զանգ ահարելով Medicare-ի անվճար հեռախոսահամարով՝ **1-800-MEDICARE (1-800-633-4227)**: Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության դժվարություն, ապա դուք կարող եք զանգ ահարել՝ TTY **1-877-486-2048**:

Դուք նաեւ կարող եք հնարավորություն ունենալ ստանալու հավելյալ օգ նություն՝ տարեկան չապահովագ րվող նվազագ ույները, ամսական ապահովագ րավճարները եւ դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ Medicare-ի ծրագ րի (Մաս D) հետ կապված համավճարումները վճարելու համար: Դուք կարող եք բավարարել հավելյալ օգ նության պահանջներին, եթե դուք ունեք սահմանափակ եկամուտ (կապված աղքատության դաշնային մակարդակին): Եկամուտի եւ միջոցների այդ սահմանափակումները ամեն տարի փոփոխվում են եւ նույնը չեն, ինչ SSI-ի եկամուտի եւ միջոցների եկամուտները: Ընթացիկ թվերի համար դուք կարող եք զանգ ահարել Սոցիալական ապահովությանը:

Եթե դուք ունեք է եւ դեղատոմսով բաց թողնվող դեղերի Medicaid եւ Medicare եւ Medicare եւ SSI կամ եթե ձեր նահանգ ը վճարում է ձեր Medicare-ի ապահովագ րավճարները, ապա դուք ինքնաբերաբար ստանալու եք այս հավելյալ օգ նությունը եւ դուք չպետք է դիմեք:

## Դուք կարող եք հնարավորություն ունենալ Սոցիալական ապահովություն ստանալու համար

Եթե դուք բավականաչափ երկար ժամանակամիջոցում աշխատել եք եւ վճարել եք Սոցիալական ապահովությանը, ապա SSI ստանալու ընթացքում դուք կարող եք բավարարել Սոցիալական ապահովության նպաստներ ստանալու պահանջներին: Ծերության նպաստները կարող են վճարվել 62 տարեկան եւ ավելի մեծ մարդկանց եւ նրանց ընտանիքներին: Հաշմանդամության նպաստները տրվում են հաշմանդամություններով մարդկանց եւ նրանց ընտանիքներին: Կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստները վճարվում են մահացած աշխատողների ընտանիքներին: Եթե դուք կարծում եք, որ կարող եք համապատասխանել Սոցիալակն ապահովության նպաստներին, ապա զանգ ահարեք մեզ՝ Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ խոսելու նպատակով հանդիպում նշանակելու համար:

www.socialsecurity.gov

**Social Security Administration**
SSA Publication No. 05-11000-AM
Supplemental Security Income (SSI) (Armenian)
August 2012